ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ«ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՐԴ ԴԱՐԸ (1991-2017)», Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 512 էջ:

Հայտնի է, որ ժամանակակից պատմությունն գրելը չափազանց բարդ գործընթաց է, որը պահանջում է ոչ միայն գիտելիքների խոր և բազմակողմանի իմացություն, փաստերի համակողմանի համադրում, օբյեկտիվ եզրակացություններ, այլև համարձակություն, քանզի դեպքերի անմիջական մասնակիցներն ու պատմական իրադարձությունների իրականացնողների մի մասն իր սուբյեկտիվ ընկալումն ունի կատարվածի նկատմամբ, ինչը շատ հաճախ պահանջում է համակողմանի վերլուծություն ու գնահատականներ, որոնք ոչ միշտ են համընկնում նրանց տեսակետի հետ և ճիշտ ընկալվում հասարակության որոշ մասի կողմից: Ուստի նման ուսումնասիրությունը պահանջում է երկար տարիների տքնաջան և ինքնուրույն աշխատանք, որը կարող է հետաքրքրություն առաջացնել ոչ միայն նման հարցերով զբաղվող հասարակագետ-գիտնականների, այլև ընթերցող լայն շրջանակների մոտ:

Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության անցած քառորդդարյա ուղու հիմնախնդիրներին նվիրված սույն մենագրությանը լուրջ ներդրում է հայ պատմագիտական ոլորտում հասարակական_քաղաքական բանավեճում: Պրոֆեսոր է. Մինասյանի աշխատությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմելու մեր անկախության 25ամյա անցած ճանապարհի գաղափարական, տնտեսական, սոցիալական, մշակութային քաղաքականության խնդիրների վերաբերյալ: Ուսումնասիրությունը հայոց պատմության մեջ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պատմության հնարավորինս ամբողջական պատմաքննական լուսաբանման և խորը գիտական վերլուծության առաջին փորձն է՝ լայն հասարակությանը համակողմանիորեն ներկայացնելու հայկական զույգ անկախ հանրապետությունների անցած ուղու հիմնախնդիրները, ձեռքբերումները, բացթողումներն ու թերությունները:

է. Մինասյանի կողմից կատարված ուսումնասիրության հիմքն են կազմում բավականին նշանակալի արխիվային նյութերը, պետական, կառավարական, կուսակցական և այլ բնույթի հուշագրությունները և այլն, որոնցից շատերն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Վերլուծելով երկու հանրապետությունների 2,5 տասնամյակ անցած ուղու ներքին կյանքի բարեփոխումներն ու դրանց արդյունքները, արտաքին քաղաքականության խնդիրները՝ հեղինակն իրավացիորեն նշում է, որ դրանք պայմանավորված էին որոշակի օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով և թվարկում ու վերլուծում է դրանք: Ըստ էության՝ է. Մինասյանի հետազոտության արդիականությունը զգալի է հասարակության ներքին և արտաքին կյանքի տարբեր ոլորտներում, մանավանդ որ նորօրյա շատ խնդիրներ իրենց արմատներով ձգվում են մինչև անկախության գործընթացի սկզբնական ժամանակները:

Տնտեսական ոլորտում պետության դերակատարության, ազգաբնակչության սոցիալական վիճակի, նորանկախ պետականություններում հասարակական– քաղաքական կյանքի, պետականաշինության, հայ-ադրբեջանական ձգձգված առճակատման, շրջափակման, նոր ձևավորվող միջպետական հարաբերությունների, ինքնիշխան հայկական հանրապետությունների այլ ոլորտների քննարկումն ու վերլուծությունը առավել համոզիչ են դարձնում սույն հետազոտության հրատապությունը:

Է. Մինասյանի ուսումնասիրության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է աշխատանքի փաստառատությամբ և տեսական ընդհանրացումներով ու վերլուծություններով:

Է. Մինասյանի հանրագիտարանային բնույթի բազմապլան աշխատանքի առանձնահատկություններից է այն, որ նրանում առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ պատմագիտական վերլուծության են ենթարկվել քննարկվող ժամանակահատվածում անկախ Հայաստանի կենսագրության այնպիսի կարևոր ոլորտներ, ինչպիսիք են՝ մշակութային կյանքը, գիտությունն ու կրթությունը, առողջապահությունը, հայրենիք – սփյուռք հարաբերությունները և այլն:

Մեր կարծիքով՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության խնդրո առարկա ժամանակահատվածի պատմության լուսաբանմանը նվիրված այս ծավալուն և համապարփակ հետազոտությունը՝ ներկայացված հարցադրումներով, հիմնահարցի լուսաբանման յուրահատուկ մեթոդոլոգիայով, կայուն ուղի է հարթում հայկական երկու հանրապետությունների պատմության հետագա ուսումնասիրման համար, առաջ է բերում բանավեճեր, նոր քննարկումներ՝ ստիպելով շարունակել գիտական որոնումները:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ամատունի Վիրաբյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ Պողոսյան